նութիւններն են կարմրեմ, այլ նրա կրօնը, այսինքն նրա գաղափարը Աստուծոյ մասին, որ ուշիշ յարաբերութիւն չունի քաղաքային օրէնքների հետ։ Բարեբաղդաբար քայլափոխին մենք նման հարց ենք առաջարկում իր կրօնի մասին։ Ամեն անգամ երբ նիւթական շահերը հասցնում են հրէային իր իրաւունքները սահմանափակող որոշումների կախարդված շրջանին, նա ինքն իրան հարց պէտք է առաջարկէ իր կրօնական համոզմունքներին հաւատարիմ մնալու և իրան զրաւող նիւթական շահերը զերադասելու մասին, որոնց նա անխարդ է ձեռք բերել, եթէ իր կրօնին հաւատարիմ մնայ։ Այսպիսով երևում է, որ մեր օրէնսդրութիւնը թոյլ տալով որ և է սահմանափակութիւնների իրաւունքների մասին, մենք մի և նոյն ժամանակ անգթաբար խախտում ենք կրօնի համբերողութեան սկզբունքը, որ ժամանակակից պետութիւնների ամենաթանգագին սկզբունքն է։

Բայց կրօնի համբերողութեան սուրբ սկզբունքը միակ չէ, որ խախտվում է հրէաներին սահմանափակող օրէնսդրութեան որոշումներով։ Կարելի է համարձակ ասել, որ իրաւունքի ոչ մի ընդհանուր սկզբունքը անխախտ չէ մնում այդ որոշումների շնորհիւ։ Վերցրէք, օրինակի համար, իւրաքանչիւր ժամանակակից պետութեան իրաւունքի մի այլ հիմնական սկզբունք։ Մենք խօսում ենք այն սկզբունքի մասին, որ սովորաբար ձևակերպվում է հետևեալ կարգաւորմամբ, բայց մեծ նշանակութիւն ունեցող նախադասութեամբ «Հաւասար պարտաւորութիւններ-հաւասար իրաւունքներ»։ Այս սկզբունքի տեսակէտից հրէաների իրաւունքների սահմանափակելը, եթէ այդ պահանջվեր ուրիշ հիմնաւորումներով, կարելի էր ընդունել, եթէ մի և նոյն ժամանակ ընդունէինք նրանց պարտաւորութիւնների սահմանափակումը, այսինքն նրանց հասարակական և պետական պարտաւորութիւնների սահմանափակելը։ Այդ սկզբունքի հիման վրա, սահմանափակելով հրէաների իրաւունքները, պէտք էր մի և նոյն ժամանակ փոքրացնել նրանց տուած տուրքերի և հարկերի քանակութիւնը։ Օրինակ շատ օտարոտի է պահանջել մարդուց որ նա թափէ իր արիւնը Հայրենիքի համար, քանի որ այդ Հայրենիքը նրան կատարեալ իրաւունքներ ունեցող իր քաղաքացի չէ համարում, ուրիշ խօսքերով քանի որ այդ Հայրենիքը կատարելապէս նրա Հայրենիքը չէ համարվում։ Այս միաբը շատ գեղեցիկ կերպով մեկնեց Բամարիայի ազգային Ժողովի մէջ, բանարական պահպանողական կուսակցութեան առաջնորդներից մէկը, իշխան Վալլերշտէյն, երբ պատգամաւորների Ժողովի մէջ վիճաբանութիւններ կային հրէաների ոչ թէ քաղաքային, այլ քաղաքական իրաւունքների մասին։ Բամարական նախկին սահմանադրութեան յօդուածներից մէկի համեմատ ժողովրդական ներկայացուցիչներ կարող էին ընտրվել միայն քրիստոնեաները։ Այդ յօդուածը խախտում է հրէաների դէմ։ Այդ յօդուածը ոչնչացնելու համար եղած վիճաբանութիւնների ժամանակ իշխան Վալլերշտէյն ասաց։

«Իրաւացի է արդեօք հասարակական և պետական պարտաւորութիւններին մասնակցող մարդկանց բացառել այն դէպքում, երբ Հարկաւոր է օրինական կերպով կանոնաւորել այդ պարտականութիւնները։ Պետական տեսակէտից արդեօք խելացի է քաղաքացիների ամբողջ մի դասակարգը յայտնի դէպքում ստորացնել մինչև դրասի աստիճան և այդպիսով անհրաժեշտ դարձնել նրա ներքին ընդդիմադրութիւնը դոյութիւն ունեցող կարգերին։ Պահպանողական է արդեօք ազգարարական նշանաւոր տարբերվել ամենաուրբ զրկել ամենաուրբ զգացմունքներից և պահանջներից։ Եմ կարծիքով կրօնի շրջահայացքը իրականապէս զանազանվում է աշխարհական պետութեան շրջահայացքից։ Կրօնի շրջահայացքը աւելի բարձր է, որովհետև նա պարում է պետական իւրաքանչիւր ձևի վրա։ Բայց եթէ այս այսպէս չը լիներ, եթէ քրիստոնեայ պետութիւնը իր սկզբունքի հիման վրա ճշմարիտ սահմանված լիներ բացառութիւններ անել ոչ-քրիստոնեաների համար, գիտէք արդեօք, թէ այդ պետութիւնը ինչպէս պէտք է վարվէր։ Նա պէտք է ասէր. ոչ-քրիստոնեաներ, դուք պէտք է չը տաք պետական հարկեր։ Ոչ-քրիստոնեաներ, մենք այլ ևս ձեզանից հասարակական պարտաւորութիւններ չենք պահանջում։ Ոչ-քրիստոնեաներ, դուք պարտաւոր չէք մեր զօրքերի շարքում թափել ձեր արիւնը պետական նպատակների համար։ Այս դէպքում պետութիւնը գտնեա նպատակաւորապէս կը վարվէր։ Պետութիւնը այս դէպքում, իմ կարծիքով, շատ անմպատակայարմար կը վարվէր, բայց գոնեա յայտնի չափով յաջորդաբար կը վարվէր։ Եկ ասել. վճարեցէք մեզ հետ և մեզ համար, թափեցէք ձեր արիւնը մեզ հետ և մեզ համար, բայց երբ հարցը իրաւունքին է հասնում, դուք ոչինչ նշանակութիւն չունիք։ այս անելը համապատասխան չէ քրիստոնէական ոգուն և ես շատ կը ցաւէի եթէ դուք այդ կերպով ձևակերպէք քրիստոնեայ պետութիւնը։ Նա այդ դէպքում այնպէս չէր վարվի, ինչպէս քրիստոնեայ պետութիւն, որովհետև նա անիրաւացի կը վարվէր, իսկ քրիստոնէութեան առաջին պահանջը իրաւութիւնն է։»

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒՐԻՑ

—

15 Օգոստոսի

Վերջին ժամանակներում ամենայն տեղ սկսան լուրեր տարածել, թէ Կոմկասում ռուսաց նոր նուաճած երկրներում քրիստոնեաների մէջ երևում է դասակարգ ձգտումն զանազանութեան դէպի Մահմետականութիւն։ Ի թիւս այլոց, այդպիսի լուրեր տարածվել են և մինչև անգամ իշխանութեան ականջին են հասել նաև Արդուինի քրիստոնեայ բնակիչների մասին։

Համաձայնով այդ բոլոր տեղեկութիւնները Արդուինի հայ լուսաւորչականների մասին անէին, ես կամենում եմ այդ խնդրին որ և է պարզութիւն տալ. ուստի խնդաշաբար խնդրում եմ ձեզ, յարգոյ խմբագիր, որ ձեր լրագրի միջոցաւ հրատարակէք այս իմ նամակը և տեղեկութիւն այդ խնդրով պարզաբանեցէք։

Արդուինի մէջ բնակվում են տասնիներ և լուսաւորական ու կաթոլիկ հայեր, ընդամենը մօտ 1000 տուն, որոնցից 450 տուն հայ կաթոլիկ, 150 տուն լուսաւորչական և մնացեալներ տասնիներ են։ Կարծիք չը կայ, որ մահմետականները, ինչպէս կոյր աչակերտ և հետևող իրանց միակ մարգարէին, գաղթում են և կը գաղթեն Արդուինից, ինչպէս և այլ նոր առնված քաղաքներից։ Հայ կաթոլիկների մասին ես կարող եմ ասել համարձակ, թէ նրանք ձգտում են դէպի գաղթականութիւն, որովհետև սամանան տէրութեան ժամանակ, երբ մեզ քաղաքներում գլխաւոր և իշխող ազգը նոյն իսկ սամանցիք—մահմետականներն էին, ոչպէս չէր Արդուինում։ Այստեղ հայ կաթոլիկները շափազանց աւելի իշխում էին և բռնանում ինչպէս փոքրաթիւ լուսաւորչականների, նոյնպէս և այստեղի մահմետականների վրա անգամ, քան թէ իրանք մահմետականները Տաճկաստանի բուն քաղաքներում մի այլ ազգի վրա։ Այստեղ հայ կաթոլիկներին մինչև անգամ տասնվաց տէրութենից նշանակված մահմետական դատաւորներին էին փոխում, այնպէս որ ժողովրդի վիճակը և կառավարութեան դիրքերը կախումն ունէր մի քանի նշանաւոր հայ կաթոլիկ անձերից և նոյնպէս նրանց հոգևորականներից։ Ոչ մի դատ և խնդիր չէր հանի կառավարութեանը առանց դրանց մասնակցութեան, որոնք միասին ձեռնամուխ լինելով ժողովրդի ամէն գործերի մէջ, մեծ օգուտներ էին տանում դէպ ինքնից։ Արեանն, ինչ դարձաք եթէ այդպիսի անձերը և հոգևորականութիւնը միասին զրկեն ժողովրդին, (հարկաւ իրանց կաթոլիկ ժողովրդին) գաղթել դէպի Տաճկաստան, (ինչ քաջ յայտնի է և տեղական իշխանութիւնն ևս գիտէ, որ վերջին օրերում դրանց խորհրդով ուղարկված է Ն. Գոլիս մի անձն, Յովհաննէս Էֆենդի Փիլոյեան, որ այնտեղ արդուինցի ազգայնի հայ կաթոլիկ գաղթականների համար տեղ պատրաստէ) մանաւանդ որ ռուսաց այստեղ մուտք գործելու օրից դրանց իրանց նշանակութիւնը կորնչացրին բոլորովին և դրանց գրութիւնը վատացաւ, որովհետև դրանք միայ այլ ևս չէն կարող այնպիսի մեծ գերիր խաղալ Ժողովրդի և կառավարութեան առաջ, ինչպէս տասնվաց կառավարութեան ժամանակ։—Իսկ ինչ որ վերաբերում է Արդուինի հայ լուսաւորչականներին, ես կարող եմ հաստատապէս ասել, որ նրանք ոչ մասնակից են և ոչ էլ կը մասնակցեն այդ մասին։ Նրանք ընդհակառակն մեծ համակրանքով սպասում էին մի օր ազատ ազատվել տասնվաց բարբարոս տէրութիւնից, որի տակ նրանք դատապարտված էին ամենայն զրկանքների։ Չէին հաշվում ոչ մի քաղաքական իրաւունքներից և չէին կարողանում բարձրացնել իրանց ձայնը հայ կաթոլիկների և տասնիների դէմ։

Հրատարակելով այսպէս Արդուինի հայ լուսաւորչականների գաղթելու մասին բոլորովին հեռի լինելը, ինձ մնում է միայն խորհի արդարութեամբ ասել մի քանի խօսք ես Արդուինի ներկայ խեղճ դրութեան և այն շարժառիթների մասին, որոնք գուցէ, և շատ կարելի է, ստիպում են հայ կաթոլիկներին գաղթել Արդուինից։ 1) Արդուինը, որ վաղուց յետէ առևտուր էր անում Կարսի հետ, Օլթիի և ուրիշ քաղաքների հետ և դրանով կերակրում էր իր բնակիչներին, այժմ այն քաղաքների տասնիների, վաճառական և գլխաւորապէս երկրագործ ոյժի գաղթելու պատճառաւ, մնում է այժմ որբացած և զրկված իր առևտրական օգուտներից։

Վաճառականութիւնը, որ արդուինցոց միակ և գլխաւոր պարապմունքն էր, այդ պատճառաւ հիմայ յետին և վատ դրութեան մէջ է մնացել։ 2) Բացի վաճառականութիւնից, Արդուինի բնակիչները, մանաւանդ կանայք պարապում էին կուսակ գործելով և այստեղ խիստ առատ բուսնող թութի պտուղից պրատ քաշելով և ծախելով այն ինչ այժմ անցեղի և մաքի կառավարութեանց պատանված ծանր հարկերի պատճառաւ դադարեցան։ Արդուինում այդ պարապմունքը, պարապմունք, որ կուշտ հաց էր տալիս բազմաթիւ որբ և այրի կանանց և երեխաներց։ Եվ այսպէս, տասնիներին գաղթեցին, վաճառականութիւնը դադարեցաւ, պարապմունքները վերջացան, արդուինցոց վաստակի և հաշերի աղբիւրները ցամաքեցան, իսկ հարկերը և տուրքերը ծանրացան,—Բայ է մնում ուրեմն անել արդուինցոց սոսկից յետոյ։ Դաշտեր և հովիտներ չունի Արդուինը, որ նոքա երկրագործութեամբ և հաշտարարութեամբ գոնէ պարապեն, քաղաքը քարքարուտ է և լերան վրա կառուցած։ Արդուինը չունի ճանապարհներ, որ ժողովուրդը իր սովորական պարապմունքը, վաճառականութիւնը, որի մէջ խիստ ճարտար է, հեռաւոր քաղաքների հետ սկսի անել։ Արդուինը կորնչացեալ է հիմայ, զուրկ ամենայն հարստացանութիւնից։ Արդուինցիք ներկայումս խիստ ցաւալի դրութեան մէջ են գտնվում։ Նոցա մեծ մասը քաղցած և մերկ են և օրական հաշի կարօտ, հաւատացէք, որ օրական չոր հաշի կարօտ։ Շատերը հիմայ, որ դեռ ամառ է, պտուղներով են միայն կերակրվում հացի փոխարէն, և հաւանականութիւն չէր լինի, եթէ ասվի, թէ ոմանք գաղտնի կերպով բոյսերով են սնունդ տալիս իրանց տատերին։—Եղջիւր և ծնոր գրութիւն....Արդուինցիք իրանց այս խղճութեան մասին յայտնելին իշխանութիւնը, խնդրամատոյց լինելով ոստիկի վերջերում այստեղ այցելելիան ելող Բաթումի ս. Նանսանպատէն և յոյս ունեն, թէ մօտ օրերում իշխանութիւնը անշուշտ կը ձեռնարկէ իրանց այդ վատ դրութենից ազատելու։

Նկարագրելով այսպէս առհասարակ բոլոր արդուինցոց վատ դրութիւնը և խեղճ վիճակը, անտարակոյս կը հարցանէք. ընթերցող. թէ ինչ է ուրեմն պատճառը, որ հայ-կաթոլիկներն են, որ ձգտում են գաղթել, իսկ լուսաւորչականները մնալով անդամ չեն դրա մասին։—Ասում ենք.—նախ, որ լուսաւորչականները, ինչպէս վերը ասացի, ժողովրդի փոքր մասն են կազմում, ուստի կեանքի ամէն ծանրութիւն փոքր մասնի համար այնքան դժուար չի լինի, ինչքան մեծ մասնի։ կաթոլիկների համար։ Երկրորդ, որ լուսաւորչականներին շատերը պարապում են այլ և այլ արհեստներով, օրինակ դարձուկաները և այլն, և երրորդ. այդ տարրը տանկաց ժամանակ ևս ընկված լինելով թէ կառավարութեան հարաւածներից և թէ իր այլ ազգական, կաթոլիկ համազգիների և նոցա հոգևորականութեան հարատաւարութիւններից, կազմել է ժողովրդի փոքրագոյն, խոնարհ և հեռագնդ մասը։ Նա իր կեանքը նուիրելով միշտ իր ապրուստը և գերդաստանի հացը հայթայթելու խաղաղ միջոցների, այն է արհեստների, պաշտպանել է միշտ և ներկայ իր դառն կենաց ժամանակ ևս կանխնում է պաշտպանել իր ազգային գարեղ յատկութիւնը—յամրեկ ամէն դժուարութիւնների, համբերութեամբ և բուռն դիմադրութեամբ կեանքի ճանապարհի վրա պատահող բոլոր արգելարիթների, բոլոր խոչընդոտներին։

Օտարական

ՆԱՄԱԿ ԱՐԱԳԱԾՈՏ

—

Օգոստոսի 26-ին

Ի նկատի առնելով պետք Արագածի հազարաւոր մութ խորշերը, անտառի ժայռերը, օձապտոյտ բարակ շաւիղները, անճանչելի խրամները, աշտարեն անդունդները, անմարդաբնակ այրերը և այլ հազարում մի տեսակ անելանելի ծակ ու ծուկերը,—մեծ կարելի է եզրակացնել որ Արագածը այնպիսի մի անառիկ և բնական բերդ է, որ ամենաթանգ ապարանքն էլ կարող է ընդդիմադրել մի աշտարեն դիմաց։ Հէնց այս բնական յարմարութիւնն է պատճառը, որ ամէն տեսակ արիւնարբու ասպատակ, փախստական մարդասպան, թուրք, քուրդ, որ և իցէ չարագործութիւն արած ժամանակ, իր փրկութեան ապաստանարան Արագածի ասառ խորշերի մէջ է որոնում։—Գարունը բացվելուն պէս ասպատակութեամբ մեծացած Զորամ-գեա-ներ արիւնարբու թուրքերը խելոյն թափվում են իրանց շտեղով Արագածի խոտաւէտ գագաթը և վրաններով բռնում են բարձրաբերձ տեղերը։ Սրբանց կանայքը իւղ, պանիր են պատրաստում, իսկ մարդիկը, այդ անկուշտ ասպատակները, խմբերով Արագածի ստորոտից ցած են իջնում, ամբողջ կում են խեղճ գիւղացոց եղերը, կովերը, հանձրս տանում են գուշանը, ձեղրում են տները, կոզոտում են ճանապարհորդներին, շատերին սպանում և յետոյ վերադառնում իրանց վրանները և անպայմանում Արագածի հազար ու մի մութ ծակերում։ Ով կարող է յանդգնել և այս արիւնարբու ասպատակների եռեից խուզարկութիւն անել, այն էլ Արագածի խորշերում, հարցնում ենք, ովք։ Միայն նա կարող է այստեղ ոտք խոսել, որ իր կենցաղից բարդել է և իր գլխից ձեռ-գի վեր առել։ Մանաւանդ որ այստեղ են բնակվում երկու հռչակաւոր ասպատակներ իրանց չարագործ խմբերով, որոնցից գլխաւորը չարագործն է Քեալբալայ Ազիզը, որի բանելու համար շատ վաղուց է շատերը հարցում էին, բայց ոչ ոք չէր կարողանում այդ զարշուրելի գազանին մօտ գնալ։ Սրբոյորդն է Երիսա-ոլլի։ Սրանք իրանց անվնիներ և անեղիք զրամ չունեն օ ձ ա խ ե ն ե ն չարագործներին կողոպտել, շատերին սաղ սաղ կարգնել և այսպիսով ամէն տեղ աշ ու սարսափ էին տարածել։ Բաւական է որ որոնք Մարու քաղաքից շաբաթական կարում և զուգեղով ուսի բերում, և հնչ կը դիմանայ անդէն և տկար գիւղացին։

Օգոստոսի մէկին այս Քեալբալայ Ազիզը իր խմբով պատահում է ուղտապանների հարաւանին, որ մի վաճառականի մանկական տարոյք են տանելիս լինում։ Աչքանցդարալը Գիւզալարաբոս և Ղազիս-Վակիրմանի մէջը Քալեռում են գ և ա բ վ ա ն ը և սպանում քրիստոնեայ Զորամին... Նոյն տարի 2-ին այս լուրը հասնում էր ինձ, որ պատանի Գիւզալարի գլխաւոր պ. Ռաֆել Տէր-Առաքէլեանցին։ Սա առանց ժամանակ կորցնելու վեր է առնում իր հետ Ազդուլեի քաջ երիտասարդ Վարդանին, որ իր նշանաւոր քաջութիւնով յայտնի է շատերին, տրա հետ էլ ուրիշ ձիաւոր և սկսում են հետամտել չարագործներին։ Հարց ու փորձ անելով հասնում են Արագածի տակը։ Այստեղից էլ հազար ու մի տեսակ վտանգների հանդիպելով, մաշը լանձն առած, զանազան տեսակ խորամանկ հնարներ գործ դնելով մտնում են Զօսպանքեալարի վրաները և տեղեկանում են, որ ասպատակ Քեալբալայ Ազիզը իր բոլոր չարագործներով այդտեղ, իր հոր վրանում գիշերվայ է։ Աշխատում են և մի փարեանութեամբ խմբում են չարագործների վրանի տեղը և նրան համապատասխան դիրք բռնելի են պատրաստվում։ Մեկին ուղարկում են Դաւիթ-Վաղիրմանի գաւառապետ

Digitized by Google

օգնական եռեւից, որ օգնութեան հանի, երկուսն էլ թողնում են վիաներին պաշտպանելու, միայն երեք հոգի—աղջուլեցի Վարդանը, պ. Առաքել Տէր-Առաքելեանցը և մի քիչ զինուորված առաջ եկ գնում։ Բանը հասնում է, փոխադարձ ընկնում է թուրքերի վրաներում, չարագործները գլխի կ՚ընկնում, որ իրանք շրջապատված են և դուրսի կարծում են թէ իրանց հակառակորդները շատ են, այդ պատճառով լաւ զինուորվում են և աշխատում են մեր տղերանց մի կերպ ճանապարհի բերանից հեռացնել և վրաներից ցած գցել, բայց այդ չէ յաջողվում նրանց։ Հարաւեանց Քեալբաշլայ Ալիքը, այդ նշանաւոր առագաստ, ծպտեալ շորերով դուրս է գալիս վրանից և կամաց գնում է դէպի այն վրանը, որի դրանը իր ձին պատրաստուած էին։ Այսպանը յաջողում է Ալիքին, նա ճարպիկութեամբ թռչում է իր ձիու քամակը, ծպտեալ շորերը թափում է թէ չէ, ամբողջ մարմնը նոր ձեւի զէնքերի մէջ պատած է լինում։ Հէնց այս րոպէին մեր տղերքը ճանաչում են Ալիքին և հրացանները պատրաստի ամենքը մի կողմից ձայն են տալիս.—Էյ Ալիք, զէնքերդ թափիր, անձնատուր եղիր, մենք քեզ շատար ենք եկել։—Հեռու կացէք թէ չէ բոլորիդ կը կոտրեմ, պատասխանում է հեշակաւոր Ալիքը և գնտակները մէկ միւսի ետեւից շաղ է տալիս մեր տղերանց վրա, բայց բարեբախտաբար շորերը ծակելով և մէկի ձեռքը արիւնելով գնտակները անցնում, իսկ Ալիքը անվնասաբար զոռոռացնում է հրացանը և կամենում է ճանապարհ բաց անել փախչել։ Աղջուլեցի քաջ Վարդանը, որ այսպիսի ճակատամարտերի մէջ հաւաք անգամ եղել է, մի անգամ արձակում է հրացանը և գնտակը Ալիքի շորերը ծակելով անցնում է և այսպիսով կնքնապատում է Ալիքի կատաղութիւնը, որ առատօրէն գնտակ գնտակի ետեւից թափում էր իր երեք հակառակորդների վրա։ Հակառամարտը տաքացաւ, թուրքերի քաջութիւնը հանդիսատես էր լինում տաք կրուէն, իսկ կանաչ անդադար աղաղակում էին «չէ-Ալլա, սան քեարամաթ էյլայ բիզիմ Ալիքայ»։ Կռուի լաւ տաք ժամանակ, Առաքել Տէր-Առաքելեանցը մի անգամ էլ որ բաց է անում հրացանը, գնտակը թափանցում է ուղիղ Ալիքի կուրծքի մէջ, որ իսկոյն փաթաթվելով ձիու պարանոցը, վեր է ընկնում իր հաւաք վրանի առաջ։ Մեր տղերքը անապրում են մօտ գնալ և գլուխը կտրել, բայց դիմացի վրանից այնքան հրացաններ են գցում որ անկարելի է լինում մօտ գնալ։ Մեր տղերքը ըսկսում են հրացան արձակել դէպի վրանը, բարեբդից ամենաքաջ սրտով պատերազմում էր զինուորված Ալիքի կինը, որի հրացանի գնտակները շատ անգամ նպատակին մօտենում էին։ Կանաչ գուրս են թափվում վրանից և աշխատում են փախչել։ Այդ րոպէին Ալիքի ընկեր հեշակաւոր Եբիբ Խաւօղլին կնոջ շորեր հագած կամենում է փախչել։ Առաքել Տէր-Առաքելեանցը իսկոյն ճանաչում է որ կնոջ շորերով գնացողը Եբիբ Խաւօղլին է, իսկոյն առաջը կտրում և աջ ուսը վիրաւորում։ Մինչդեռ չարագործը պատրաստվում էր մի զենտակ հասցնել Տէր-Առաքելեանցին, իսկոյն վրա է հասնում Վարդանը և մի հրացանով չարագործին գետին զլորում։ Այսպէս ժամ ու էկս տաք ճակատամարտից յետոյ, կարդանում են մեր երեք քաջերը երկու հեշակաւոր առագաներին սպանել և մեռացածներին փախցնել։—Ճակատամարտը վերջացել էր, երբ վրա հասաւ գաւառապետի օգնականը և թուրքերի ոյժը ուզի թուլացաւ։

Այս ժամանակ Ալիքի զերդաստանը, երիխաները հաւաքվեցան նրա դիակի շուրջը և թուրքերէն լալամանի ստէլով լաց էին լինում։ Իսկ Ալիքը, որ դեռ շունչ չէր փչել, զանազան ընծաներ էր խոստանում որ իրան գտնէ թող տան իր հոր վրանի տակ փչելու իր շունչը։—Ամենից պարտեղեն այս է որ Ալիքի ծերունի հայրը այդ բոպէին գան էր մտրմում և մեր տղերանց սեղան հրաւիրում։ Բայց երբ մեր տղերքը մերժում են թէ «մենք այս բոպէին քո որդին սպանել ենք, էլ ինչ սրտով քո հացը ուտենք», ծերունին պատասխանում է, «երբ այն ժամանակ մեռաւոր կը լինէիք երբ իմ որդի Ալիքիս քնած սպանէիք, կամ յանկարծ բռնէիք, բայց երբ որ նա զինուրված իր ձին հեծած ժամ ու էկս ձեզ վրա հրացան արձակելուց յետոյ է սպանվել, այն էլ որ ցերեկով այսքան բազմութեան մէջ, մանաւանդ մենք ձեզանից եռապատիկ շատ էինք՝ ան այս ինման վրա զոռ ամենեին մեռաւոր չէք...»։ Այս մի և նոյն խօսքերը կրկնում է ինքն Ալիքը։—Ամեն տան վերջացնելուց յետոյ գաւառապետը իր ձիաւորներով երկար ուրանելուց յետոյ քարերի կոյտերի մէջից գտնում են օգոստոսի մէկին կողոպտած ապրանքները։—Այժմ կարգադրված է այս մեր քաջերին ըստ արժանոյն պարգևատրել։ Կեցցէն մեր քաջերը։ Այսուհետև Արարատի տակ ցրուած գիւղերը գիւղերը հանդիստ կը քնեն։

Ս. Տ. Մ.

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Գաւազէտ» լրագիրը հաղորդում է որ օգոստոսի 22-ին, ներկայ թուականիս Ֆրանսիայում յայտնի հնագէտ և վրաց լեզուի մասնագէտ ակադեմիկոս Մ. Բրոսսէ։ Ուրեմն վրաց հնագիտութեանը, դժբաղդաբար պակասելու է դլխաւոր և գրեթէ միակ ներկայացուցիչ եկող տարվայ հնագիտական մասնաժողովի մէջ։

—

«Новое Время» լրագիրը լսել է, որ համալսարանական կանոնադրութիւնը, որ անցեալ տարի մշակված է եղել, այժմ վերջացած է։ Լրագիրը հաստատում է այդ լուրը դրանով, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը գիտել է այժմ ուսումնարանական վարչութիւնների հոգաբարձուներին, առաջարկելով նրանց որ համալսարանների վերաբերեալ խնդիրները այսուհետև կը մնան համալսարանական խորհրդի և հոգաբարձուի կարծիքը ընդունելուց յետոյ։

—

Ռուսաց լրագիրները շատ են խօսում այժմ մի խնդրի վրա, որ անուանում են, «կրօնական խնդիր»։ Մոսկվայի «Русскій Курьеръ» լրագիրը ասում է «Ռուսաց ժողովուրդը փախչում է ռուսական եկեղեցուց, դա արդէն իրողութիւն է։» Մի ուրիշ լրագիր «Страна» հարց է առաջարկում արդեօք այն իրողութիւնը, որ ռուսը կրօնափոխ է լինում, կարելի է մեմնայն զորանով բացատրել որ հոգեորականները անընդունակ են, և նոյն ինքն իրան պատասխան է տալիս որ ուրիշ նշանաւոր պատճառներ էլ կան։ «Հարկաւոր է, ասում է ռուս թերթը, դիմել աւելորդ ի լրջին, որպէս զի վերջ դրվի զարհուրելի տեսիլեանը, որի պատճառով է կրօնական երկպառակութիւնը։» «Страна» լրագիրը առաջարկում է գեղացնել ռուսաց հոգեորականութիւնից կաստայի կանոնը, ասելով որ նոր ծուխ ինքը իր համար քահանաներ ընտրի և նրանց ապահովագնի։ Այն ժամանակ, ասում է թերթը, ամեն գաստարվի լուսաւորված մարդ ուրախութեամբ քահանայ, քարոզիչ կը դառնայ, կընդունի այդ պաշտօնը, ինչպէս ուրիշ ազատ պաշտօններ է ընդունում։ Պէտք է, ասում է թերթը, քահանայի գործը ապահովված լինի իր անձնական արժանաւորութեամբ և նա կախված չը լինի կենսաբարոյական կամայականութիւնից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՒԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ» ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

—

Հայոց Միացեալ Ընկերութեանց Նորընտիր Տնօրէն Ժողովը իւր պաշտօնի ձեռնարկած միջոցին հարկ անհրաժեշտ կը համարի ներկայանալ Ազգին և յայտնել այն պարտականութիւնները և պիտոյքները որք ներկայ միութեան գործով առաւելած են, և թէ ինչ ձեւով և ինչ պայմանով է միայն որ իր ծառայութեան գործադրութիւնը և յաջողութիւնը կրնայ ունել։

Միացեալ Ընկերութիւնը կը կարծէ թէ Հայաստանի վրա իր ուշադրութիւնը դարձնելէ յառաջ, պէտք է նախ կեդրոնը զօրացնել և թէ մինչև որ կեդրոնը չը զօրանայ, չէ կարելի բաղձացեալ արդիւնքը գաւառներէն ակնկալել, ուստի իւր բոլոր ջանքը պիտի ըլլայ, և այս է սակաւ ժամանակի կեդրոնին այնպիսի վարչական, ուսումնական և եկեղեցական կայ մը ստեղծել որով որոշմունք փութով գործադրուին, հրամանք արագութեամբ և ճշտութեամբ հաղորդուին, Տնօրէն Ժողովոյ մէն մի անդամ մի ուրան և անջատ գործառնութիւնէ յառաջ եկած դժուարութիւնները և յարպաղութիւնը միանգամ ընդ միշտ բարձուին, միով բանիւ գործոց կատարեալ միութիւն մը հաստատուի։

Երբ անդամ մը սոյն պէտքը լրանայ, զոր Միացեալ Ընկերութեան ապագայ յաջողութեան ամենէն էական պայմաններէն մին համարած ենք, Տնօրէն Ժողովը իւր բոլոր ուշադրութիւնը պէտք է դարձնէ այսօր ի սիրուս Հայրենի երկրին հաստատած վարժարանց մէջ՝ ուսուցանելու միօրինակ և կանոնաւոր դրութիւն մը ստեղծել։ այս նպատակին համար հարկ է ժողովրդական տեղական պիտոյից և պահանջմանց ըստ կարելւոյն համաչափասխանող և հետզհետէ կատարելագործութեան հակամէտ ուսումնական յայտագիր մը, դասական յատուկ դրքեր, մանկավարժական լաւագոյն և ոչ մանրակրկիտ գրութիւններ, և քան զայս ասահման մը աւելի կարևոր՝ հայրենասէր և հմուտ դաստիարակներ։

Տնօրէն Ժողովը Միացեալ Ընկերութեան պիտիէն պատրաստած ժամանակ, որ գրեթէ տարեկան հինգ հազար ռուբլոյ գումարի մը պիտի յանգի, պիտի ջանայ ամենի և ուղղակի կեդրոնին պատասխանատու տեսչութիւններ հաստատել իւր առաջին գործերէն մին պիտի լինի ընկերութեան վարժարանները գաւառական շրջանակներու բաժնել և իւրաքանչիւր գաւառաշրջանի գաւառական ընդհ. տեսուչ մը կարգել սոյն դրութիւնը հաստատելը անկարելի կամ աւելորդ համարուած վայրերը՝ առ այժմ անօրէն գաւառական հաստատութեամբ շատանալ հարկ պիտի ըլլայ, որոց ստորագրեալ և պատասխանատու են վարժարանին բոլոր միւս պաշտօնեայք։ Տնօրէն Ժողովը սոյն պահանջները հետզհետէ լրացնելէ յետոյ, իւր ընդհանուր վարժարանաց, բայց մանաւանդ գաւառական տեսչոյ հսկողութենէ ազատ եղող վարժարանաց վիճակը և մասոյ ուսումնասիրելու համար ամ ըստ ամէ քննիչ այցելու մը կամ պատուիրակ մը պիտի ղրկէ, որոց պաշտօնը պիտի լինի ընկերութեան վարժարանաց ուսումնական և նիւթական կացութիւնը քննելէ յետոյ, իւր քննութեանց արդիւնքը տեղեկագրել առ Տնօրէն Ժողովն։

Ամեն հայասէր կեդրոնները մէջ պիտի հաստատուին ընկերութեան մասնաւոր ձիւղեր, ներկայացուցիչներ կամ զործակալներ, որք ընկերութեան նիւթական բարգաւաճման՝ այն է դրամական նպատակ հասոյթից ազբիւրներ ստեղծելու հետամուտ պիտի լինին։

Տնօրէն Ժողովը ընկերութեան ապագայ գործառնութեանց ներկայ ծրագիրը իւր ինչ ինչ թերութեամբք թերևս՝ ներողամիտ հասարակութեան ներկայացուցած ժամանակ, պարտ կը համարի յիշեցնել նաև որ երբ Հայոց Միացեալ Ընկերութիւնը ազգին ընդհանուր փաստաթուղթ և թերևս ժամանակին պահանջմանց տեղի տալով՝ զրեա՛թէ տարիէ մ՚ի վեր բաղում դժուարութեանց յաղթեց մինչև որ ընկերութիւնը այժմեան վիճակին եկաւ յանդեցաւ, երբ Միացեալ Ընկերութիւնը իւր յաջորդ նախկին երից՝ այն է Արարատեան, Դպրոցասիրաց-Արևելեան և Կիլիկեան ընկերութեանց, նոցա վարժարանաց տեսչութիւնը, վարչական և երկրական զանազան յարաբերութիւնները ստանձնելու և եռապատիկ ընդարձակ՝ նա մանաւանդ աւելի մեծ շրջանակի մը մէջ գործելու պիտոյքն կը զգայ, քաղցր է մեզ յուսալ թէ Ազգը ոչ միայն պիտի չի գլանայ մեզ այն քաջալերութիւնը և ձեռնտուութիւնը որով օգնեց մեր նախորդները իւրենց ձեռնարկութեանց սկիզբը, այլ այժմ գաստիարակութեան սահմանների պէտքը իւր ուշադրութեան բարձրագոյն աւարայն նկատելով, ըստ այնմ իւր սեպհական պարտաւորութիւնները պիտի ըմբռնէ, և ըստ այնմ իրեն վերապահեալ բաժինը ճշտութեամբ և մեծանձնութեամբ պիտի կատարէ։

Ցանուն և ի դիմաց Հայոց Միացեալ Ընկերութեանց, Տնօրէն Ժողովը սոյն ներկայ յայտարարութեամբ հրաւէր կը կարդայ ամէն թուրքիստանի, ռուսաստանի և ի տար աշխարհս բնակող Հայոց որ բարեհաճեն միանգամ ևս ապացուցանել քաղաքակիրթ աշխարհի առջև թէ այն Ազգը, որ գիտցաւ ազատալի և մարդակորոյ, բայց միանայ և նիւթական սովոր մը համար անմնան առաքինութեամբ և զոհաբերութեամբ ի ջրից ծագաց տիեզերաց յօգնութիւն փութալ նոյն հայ ազգը պիտի գիտնայ նաև իրր հաւատարիմ զաւակ իւր պանծալի հնութեան և պատկառելի նախնեաց յիշատակ արժանի գործ մը կատարել և դարձեալ, հայրենաբեր և մասաւորական սով մը բնաջինջ բառնալ։

Արևմտեան քաղաքակրթութիւնը յարձելը տարածելը, կոչումն ունեցող ազգ մը պէտք չէ ինչ իւր աշխարհաշէնն ընթացից մէջ կասի, և այդ մարդասիրական ձեռնարկութիւնն է միայն որ պիտի կարենայ իրենաասնեերրորդ դարու պատմութեան մէջ փոքր ի շատ կարևոր էջ մը գրաւել։

Ուսումնասէր ընկերութիւնք, հայոց Միացեալ Ընկերութեան կազմութեամբ, իւրենց պարտականութեան առաջին քայլը կատարեցին, պէտք է որ ազգն ալ երկրորդ քայլն առնու և իւր գործով ցուցնէ թէ «ուր միութիւն կայ, հոն կայ նաև զօրութիւն»։

Ի դիմաց «Հայոց Միացեալ Ընկերութեանց» Տնօրէն Ժողովոյ առենապետ՝ Յով. Հանեսեան Թորոսեան, առենադպիր՝ Զարեհ Շիշմանեան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻԱՁԱՅԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

ԲԱԳՈՒԱՆ, 1 սեպտեմբերի։ 600 ելնոդորդիներ և 8 թնդանօթներ ուղարկված են Դուլցինիօ ուղղութեամբ ի նկատի ունենալով արքանցիների ընդդիմադրութեան դէպքը։ Ասում են, որ սեպտեմբերի 15-ին Դուլցինիօ պաշտօնապէս կը յանձնվի Զերնոգորդիային։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի։ Երկրորդ փոխանութեան տոմսակներից, որոնք խաղացվեցան սեպտեմբերի 1-ին, տարան հետեւեալները։

№№ սեր.	№№ տոմս.	տարած դրամ.
13.726	19	200.000
9.700	7	75 000
5 274	31	40 000
8.843	50	25.000
18 283	9	10.000
6.938	39	10,000
1.8 4	30	10 000
8.014	13	8.000
14 331	10	8,000
15 321	46	8,000
14 882	15	8,000
11.155	33	8.000
13 3 0	47	5.005
7 938	1	5.000
6 361	1	5,000
13 6	18	5.000
6.4 8	29	50,00
10.771	5	5,000
5.769	28	5,000
7.491	39	5.000
3 757	11	
17 207	11	
17 840	47	
6 579	47	
4 639	63	
2.563	17	
12 977	5	
15.537	3	
9.637	2	
8.523	27	
2.373	24	1,000
9.760	8	
16.131	4	
15 463	8	
18.956	37	
3.532	30	
18.869	22	
1 354	6	
2.097	13	
8.611	45	

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ